ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1352 22.07.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հուլիսի 17-ին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Հրազդանի ՁՊՎ, ուսումնասիրությունների արդյունքում արձանագրել է մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. ՁՊՎ-ի մի քանի խցերի ներսում բնական լուսավորությունը շատ վատ էր:
2. Արդեն մի քանի անգամ է, ինչ Դիտորդական խումբը արձանագրում է, որ սպիտակեղենը, սրբիչների հետ միասին գտնվում են պոլիէթիլենային թաղանթի մեջ և փաթեթավորված են կպչուն ժապավենով, որը ընդհանրապես չի բացվել և Դիտորդական խումբը միանշնական պնդում է, որ Հրազդանի ՁՊՎ-ում սպիտակեղենը ընդհանրապես չի օգտագործվում և ՁՊՎ ընդունված յուրաքանչյուր անձի սպիտակեղեն չի տրամադրվում:

Խախտումներ՝

1. Գուրգեն Սերգեյի Քոչարյանը «Զվարթնոց» օդանավակայանից բերման է ենթարկվել Հրազդանի ոստիկանության բաժին 10.04.2013թ-ին ժամը 08^{00}-ին: Սակայն բերման ենթարկելու արձանագրությունը կազմվել է Հրազդանի բաժնում, որտեղ ընդհանրապես ֆիքսված չէ նրան արգելանքի վերցնելու պահը: Տվյալ դեպքում նշված անձը որոշ ժամանակահատված գտնվել է արգելանքի մեջ և այդ ժամանակահատվածը ոչ մի տեղ չի արձանագրվել: Ըստ «ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման» գրանցամատյանի Գ.

Քոչարյանը ՀՊՎ է ընդունվել նույն օրը, ժամը 08^{00}-ին, նույն ժամանակահատվածում, երբ բերման է ենթարկվել ոստիկանության Հրազդանի բաժին և ժամը 08^{10}-ին ՀՊՎ-ում ենթարկվել է խուզարկության: Գ. Քոչարյանի նկատմամբ կատարված գործողություններում ամենաուշագրավը այն է, որ նրան ձերբակալել են 10.04.2013թ-ին ժամը 09^{05}-ին, այն ժամանակահատվածում, երբ ինքը արդեն իսկ գտնվել է ՀՊՎ-ում: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 1,2,3,4/*

2. Անդրեյ Արկադևիչ Զյաբլիցևը ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Հրազդանի բաժին բերման է ենթարկվել 16.06.2013թ-ին ժամը 16^{00}-ին: Ամենաուշագրավը այն, որ անձը բերման է ենթարկվել Երևան քաղաքի 10/1 շենքի բակից: Դիտորդական խումբը կարծում է, որ բերման արձանագրությունը տվյալ դեպքում ձևական բնույթ է կրում, քանի որ տվյալ հասցե գոյություն չունի: Ավելացնենք, նաև, որ Ա. Զյաբլիցևը ձերբակալվել է ժամը 18^{00}-ին և նույն ժամին ընդունվել է ՀՊՎ, բայց ազատ է արձակվել 14.06.2013թ-ին ժամը 19^{00}-ին, այն դեպքում, երբ նա արդեն իսկ պետք է ազատված լիներ ժամը 16^{00}-ին: Արդյունքում Ա. Զյաբլիցևը արգելանքի տակ պահվել է 75 ժամ: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 5,6,7/*

3. Գագիկ Հայկի Մինասյանը ձերբակալվել է 15.06.2013թ-ին ժամը 16^{05}-ին և նույն ժամին ՀՊՎ է ընդունվել, բայց ազատ է արձակվել 18.06.2013թ-ին ժամը 17^{11}-ին: Քննիչի որոշման գրավը վճարելու և անդորրագիրը ներկայացնելու հիման վրա: Նշված գործողությունների խնդիրը կայանում է նրանում, որ տվյալ անձը ազատ է արձակվել նույն այն ժամին՝ 18.06.2013թ-ին ժամը 17^{11}-ին, երբ վճարվել է գրավը «Կոնվերս» բանկի Հրազդանի մասնաճյուղում: */կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 7,8,10,11/*

4. Սերգեյ Հարությունի Թանյանը «Զվարթնոց» օդանավակայանից որպես հետախուզվող Հրազդանի ոստիկանության բաժին բերման է ենթարկվել 21.06.2013թ-ին ժամը 04^{00}-ին և ոչ մի տեղ չի նշվել, թե անձը «Զվարթնոց» օդանավակայանում երբ է արգելանք ի վերցվել: Նույն օրը, ժամը 04^{00}-ին Կոտայքի մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Կ. Գրիգորյանի կողմից կայացվել է որոշում՝ կալանավորված անձին ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՊՎ-ում տեղավորելու մասին:

   Հարկ ենք համարում նշել, որ հետախուզվող մեղադրյալին ՀՊՎ ընունելու հիմք է հանդիսանում ոչ թե տվյալ ձևի որոշումը, այլ՝ ձերբակալման արձանագրությունը, որը կանոնակարգվում է ՀՀ քր. դատ. օր-ի 259 հոդվածի 3-րդ կետով և ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.12.2008թ-ի ԼԴ/01/0197/06/08 նախադեպային որոշումով:*/կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 12,13,7/*

Այսպիսով խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և հանապատասխան միջոցներ ձեռնարկել իրավախախտումները բացառելու ուղղությամբ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-2361 «21» 08 2013թ.

Ձեր 22.07.2013թ. թիվ 2621/1352 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հուլիսի 17-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր և՝ Կոտայքի մարզային վարչություններում, որոնց կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1. Ոստիկանության Հրազդանի բաժնի ՁՊՎ-ի թվով 5 խցերից երկուսի՝ 1-ին և 2-րդ խցերի բնական լուսավորության լիարժեք թափանցմանը խանգարում է վարչական շենքի շինարարական նախագծով կառուցված զբոսաբակի պատը, որը վերակառուցել կամ ձևափոխել հնարավոր չէ:

2. Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ի սպիտակեղենի և սրբիչների՝ պոլիէթիլենային թաղանթի մեջ կպչուն ժապավենով փաթեթավորած լինելուն, որը դիտորդների մոտ ստեղծել է տպավորություն, որ ՁՊՎ ընդունված անձանց սպիտակեղեն չի տրամադրվում, ապա դրանք փաթեթավորված են եղել մաքուր մնալու նպատակով, իսկ ՁՊՎ-ում առկա է բավարար քանակությամբ սպիտակեղեն և ՁՊՎ ընդունված անձանց տրամադրվում է մաքուր սպիտակեղեն ու սրբիչ:

Գրության մեջ նշված խախտումների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ.

1. ՀՀ քր. օր. 327 հոդվածի 1-ին մասով հետախուզվող Գ.Քոչարյանը <<Զվարթնոց>> օ/կ-ում հայտնաբերվել է 11.04.2013թ. ժ.07.05-ին և նույն օրը ժ.08.00-ին բերման է ենթարկվել ոստիկանության Հրազդանի բաժին: Գ.Քոչարյանին բերման ենթարկելու և ձերբակալելու մասին արձանագրությունները կազմել է Հրազդանի բաժնի ՔՀԲ օպերլիազոր, ոստիկանության լեյտենանտ Ա.Առաքելյանը, որը ձերբակալման արձանագրությունում սխալմամբ ժ.08.05 գրելու փոխարեն նշել է ժ.09.05, որի համար ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ղեկավարության կողմից խիստ նախազգուշացվել է:

2. Ոստիկանության Հրազդանի բաժին բերման ենթարկված Անդրեյ Զյաբլիցևին բերման ենթարկելու մասին կազմված արձանագրության մեջ նշված բերման ենթարկելու հասցեն՝

(ք.Երևան 10/1) իրականում Երևան քաղաքի Անդրանիկի փողոցի թիվ 10/1 հասցեն է, որը հստակ երևում է նրա հետ միասին նույն հասցեից բերման ենթարկվածներ Նատալյա Քրմոյանի և Անահիտ Թարվերդյանի բերման ենթարկելու վերաբերյալ կազմված արձանագրությունների ուսումնասիրմամբ: Ուստի, Ա.Զյաբլիցևին բերման ենթարկելու մասին կազմված արձանագրությունը ոչ թե կրում է ձևական բնույթ, այլ ընդամենը թյուրիմացաբար հասցեն գրվել է ոչ ամբողջական, ճիշտ այնպես, ինչպես Ձեր գրությունում Ա.Զյաբլիցևին բաժին բերման ենթարկելու ամսաթիվը գրված է ոչ թե 11.06.2013թ., այլ 16.06.2013թ.: Ինչ վերաբերվում է Ա.Զյաբլիցևին արգելանքի տակ երեք ժամ ավելի պահելուն, ապա հայտնվում է, որ վերջինս ոստիկանության Հրազդանի բաժին բերման է ենթարկվել 11.06.2013թ. ժ.16.00-ին, նույն օրը ժ.18.00-ին ձերբակալվել և ընդունվել է ՁՊՎ: Այնուհետև, 14.06.2013թ. ժ.15.45-ին դուրս է բերվել խցից և կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննարկելու համար տեղափոխվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանի կողմից մերժվել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը և որոշում է կայացվել Ա.Զյաբլիցևին անհապաղ ազատ արձակել դատարանի դահլիճից: Նշված որոշման հիման վրա ՀՀ ոստիկանության ՔԳՎ Կոտայքի քննչական բաժնի քննիչ Ա.Աբրահամյանը 14.06.2013թ. որոշում է կայացրել Ա.Զյաբլիցևին ազատ արձակել կալանքից: Նույն օրը ժ.19.00-ին ոստիկանության Հրազդանի բաժնի ՁՊՎ է ներկայացվել քննիչի որոշումը և <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 10-րդ սյունակի (ՁՊՎ-ից ազատելու հիմքը, ամսաթիվը, ժամը) տակ գրառվել է ոչ թե փաստացի ազատելու, այլ որոշումը ՁՊՎ ներկայացնելու ժամը: Այսպիսով, Ա.Զյաբլիցևին արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետը՝ 72 ժամը չի խախտվել:

3. Գ.Մինասյանը 15.06.2013թ. ժ.16.05-ին ձերբակալվել և ՁՊՎ է ընդունվել ՀՀ քր. օր. 112 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով: 18.06.20123թ. թիվ 49106413 քրեական գործով որոշում է կայացվել և Գ.Մինասյանին մեղադրանք է առաջադրվել: Նույն օրը միջնորդություն է ներկայացվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, որը բավարարվել է, որից հետո փոխարինվել է 500.000 դրամի գրավով: Նույն օրը գրավի գումարի մուծման անդորրագիրը ներկայացվել է դատարան, որի հիման վրա այնտեղ գտնվող քննիչը որոշում է կայացրել Գ.Մինասյանին կալանքից ազատելու մասին և որոշման օրինակը տրամադրվել է ոստիկանության ուղեկցող դասակի ծառայողներին, որից հետո Գ.Մինասյանը դատարանի դահլիճից ազատ է արձակվել: Տվյալ դեպքում անհասկանալի է, թե դիտորդների խումբը ինչն է համարում ձերբակալված անձի իրավունքների խախտում:

4. Ս.Թանյանը 21.03.2002թ. ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ նախկին քր. օր. 75 հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում և խափանման միջոց ընտրվել կալանավորումը: 16.08.2004թ. որոշում է կայացվել Ս.Թանյանի արարքը վերաորակելու և գործող ՀՀ քր. օր. 327 հոդվածի 1-ին մասին համապատասխանեցնելու վերաբերյալ:

21.06.2013թ. ոստիկանության Հրազդանի բաժնից ստացված գրության համաձայն, թիվ 49201602 քր. գործով հետախուզման մեջ գտնվող Ս.Թանյանը 21.06.2013թ. ժ.04.00-ին <<Զվարթնոց>> օդանավակայանից բերման է ենթարկվել ոստիկանության Հրազդանի բաժին: Նույն օրը որոշում է կայացվել կասեցված քր. գործի վարույթը վերսկսելու մասին:

Կոտայքի մարզի քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Կ.Գրիգորյանը ղեկավարվելով <<Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի

պահանջներով՝ որոշում է կայացրել մեղադրյալ, գործով կալանավոր Ս.Թանյանին ՁՊՎ-ում տեղավորելու մասին:

21.06.2013թ. Ս.Թանյանը որպես մեղադրյալ հարցաքննվելիս հայտնել է, որ ցանկանում է մուծել <<Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին>> ՀՀ օրենքի համաձայն չծառայած տարիների համար հանրապետական միջգերատեսչական հանձնաժողովի կողմից սահմանված գումարը: Նույն օրը Ս.Թանյանի հարազատների կողմից ՀՀ ՊՆ դեպոզիտի հաշվին մուծվել է պահանջվող գումարը և 21.06.2013թ. Կոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ Պ.Պողոսյանի կողմից որոշում է կայացվել մեղադրյալ Ս.Թանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխելու և նոր խափանման միջոց ընտրելու մասին: Ս.Թանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին և վերջինս ազատ է արձակվել:

Տվյալ դեպքում Ս.Թանյանին ՁՊՎ ընդունելու հիմք են հանդիսացել վերջինիս նկատմամբ խափանման միջոցը կալանավորում ընտրելու մասին դատարանի և կալանավոր Ս.Թանյանին ՁՊՎ-ում տեղավորելու մասին քննիչի որոշումները, քանի որ կալանավորման վերաբերյալ որոշման առկայության պայմաններում, ձերբակալման արձանագրություն կազմելու անհրաժեշտություն չկա: Բացի այդ, նման արձանագրություն կազմելու դեպքում անհիմն կերպով կփոխվեր Ս.Թանյանի դատավարական կարգավիճակը և կսահմանափակվեին նրա իրավունքները, քանի որ կալանավորված անձի իրավունքներն առավել ծավալուն են քան ձերբակալվածինը:

Ինչ վերաբերվում է ՀՀ Վճռաբեկ դատարանի 26.12.2008թ. ԼԴ/01/0197/06/08 նախադեպային որոշմանը, ապա այդ որոշման 34-րդ կետի համաձայն, <<հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ>>: Ս.Թանյանը ՁՊՎ-ից ազատ է արձակվել ոստիկանության բաժին բերման ենթարկվելու նույն օրը՝ խափանման միջոցը ստորագրություն չհեռանալու մասին փոխվելու հիմքով, ուստի տվյալ դեպքում ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ որոշման 34-րդ կետի պահանջները չեն խախտվել, քանի որ նա 72 ժամը չլրացած ազատ է արձակվել:

պետ, ոստիկանության գեներալ-մայոր **Վ. Եղիազարյան**